ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԼՈՌԻ ԲԵՐԴ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՅԱՂԴԱՆ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յաղդան գյուղը հիմնադրվել է 1821 թվականին և հայտնի է որպես հունական գյուղ:

Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրը եզակի պատմությամբ ու մշակույթով բնակավայր է, որը հիմնադրվել է 1821 թվականին: Գյուղը սկզբնապես հայտնի է եղել Եղիտանք անվամբ: Այստեղ բնակություն են հաստատել հույներ՝ տեղափոխվելով Օսմանյան կայսրության Մաշալա գյուղից: Դարերի ընթացքում Յաղդանը ճանաչվել է որպես հունական գյուղ, սակայն 1991 թվականից սկսած՝ բազմաթիվ ընտանիքներ արտագաղթել են դեպի Հունաստան՝ իրենց պատմական հայրենիք: Այսօր Յաղդանը պահպանել է իր մշակութային հուշարձանները և յուրահատուկ մթնոլորտը՝ ի հիշատակ իր հունական արմատների: Յաղդանը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Գյուղի շրջակայքում պահպանվել են 17-րդ դարի եկեղեցի, միջնադարյան մատուռներ և գերեզմանոցներ՝ զարդարված խաչքարերով (13-17-րդ դարեր), ինչպես նաև 13-րդ դարի քարե կամուրջ: Այս կառույցները վկայում են Յաղդանի հարուստ անցյալը և հանդիսանում են կարևոր մշակութային արժեք:
Գյուղի բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ հիմնականում ցորենի, կարտոֆիլի մշակությամբ և անասնապահությամբ: Չնայած բնակչության թվի նվազմանը, այստեղ շարունակում են պահպանել գյուղատնտեսական ավանդույթները՝ գյուղը պահելով կենսունակ: Յաղդանը միաժամանակ հիշողություն է և ներկայություն. գյուղ, որը կրում է հունական մշակույթի հետքը՝ հայկական բնաշխարհի գրկում: Իր պատմական հուշարձաններով, ավանդույթներով ու բարդ անցյալով Յաղդանը մնում է յուրահատուկ անկյուն՝ ինչպես Լոռու, այնպես էլ Հայաստանի մշակութային քարտեզում: Յաղդան գյուղում վերջին տարիներին իրականացվել են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված ենթակառուցվածքների բարելավմանը, համայնքային կյանքի աշխուժացմանը և մշակութային ժառանգության պահպանմանը: Վերջին տարիներին գյուղում իրականացվել են ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ, ինչը էապես բարելավել է գյուղի մուտքն ու ելքը: Յաղդանի շրջակայքում պահպանվել են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, այդ թվում՝ 17-րդ դարի եկեղեցի, մատուռներ և միջնադարյան գերեզմանոցներ: Վերջին տարիներին իրականացվել են վերականգնման աշխատանքներ՝ ուղղված այս հուշարձանների պահպանմանը և վերականգնմանը:
Այս բարեփոխումները նպաստել են Յաղդանի զարգացմանը և բնակիչների կյանքի որակի բարելավմանը:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1350 մ բարձրության վրա՝ շրջապատված բարձր սարերով: Այս սարերի լանջերին հոսում են փոքրիկ բնական աղբյուրներ, որոնք սնուցում են բնությունը և գյուղի տնտեսությունը:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ստեփանավանի շրջան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	9
2.2) մայրաքաղաքից (կմ)	163
2.3) մարզկենտրոնից (կմ)	42
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	40
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	12
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	12
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	42
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1350
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	12.96քառ.կմ/1296,5հա
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Ագարակ,Կողես, Հովնանաձոր
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	093891312
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո 1
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	241
2. Գրանցված ծնունդների քանակը	7
2.Մահացության դեպքերի քանակը	1
3.Ամուսնությունների քանակը	1
4. Ամուսնալուծությունների քանակը	1
5. Տնային տնտեսությունների թիվը	105
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	16
7. Կենսաթոշակառուների քանակը	18
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	7

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.

1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ($մ^2$)	15300
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	169

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1118,33
2. Բնակավայրերի հողեր (հա)	49,61
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	10,62
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	8,26
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	5,17
7. Անտառային	79,19
8. Ջրային	13,15
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	117
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	362
11. Խոզերի գլուխաքանակը	26
12. Գյուղատնտեսական տեխնիկա	11
12.1 տրակտորներ (քանակը)	5
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	108

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	2
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	2
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	5
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	4
1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	0

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Բնակավայրի մասնակի գազաֆիկացում	Բնակավայրի ամբողջական գազաֆիկացում մինչև 2030թ
Խմելու ջրի մատակարարման բարելավում	Խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում

բնակավայրի մասնակի գիշերային լուսավորություն	Բնակավայրի ամբողջական գիշերային լուսավորություն մինչև 2026թ սուբվենցիոն ծրագրով